[255154]-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» օգոստոս 2017թ. N 106-Ա/1

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 3-ի եզրակացությունը «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության կողմից տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու վերաբերյալ».

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հավաստագրել «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ «Տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տնային պայմաններում»:

2.Հանձնաժողովին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանը «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով հասարակական կազմակերպության տրամադրած (նշած) գտնվելու վայր ուղարկելը:

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ